ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 06 -Լ «26» հունիսի 2026 թ.

«ՀԱՅԵՐԵՆԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՎԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով և 19-րդ կետի 20-րդ ենթակետով և հաշվի առնելով «Լեզվի մասին» օրենքի 2-րդ մասի 6-րդ կետի «բ» ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Հայերենի ստուգման և գնահատման համակարգը վարելու մասին» կարգը՝ ըստ հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

6/26/2026

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարի
2026 թվականի հունիսի 26-ի
06-Լ հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԵՐԵՆԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՎԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում է հայերենի ստուգման և գնահատման համակարգի (այսուհետ՝ Համակարգ) վարման ընթացակարգը և կարգավորում են համակարգից օգտվողների հետ կապված իրավահարաբերությունները:

2. Հայերենի իմացության ստուգման և գնահատման համակարգը առցանց միջավայր է, որը նախատեսված է հայերենի իմացությունը չափելու համար: Իմացությունը չափվում և գնահատվում է «Հայերենի ստուգման թեստ» հարթակի (այսուհետև՝ Հարթակ) միջոցով:

3. Համակարգի բովանդակային մասի ապահովումն իրականացումն է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լեզվի կոմիտեն: Հարթակի աշխատանքի տեխնիկական և ծրագրային ապահովումն իրականացնում է «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

4. Համակարգից օգտվող անձը սույն կարգում անվանվում է օգտատեր կամ մասնակից:

5. Համակարգի թիրախային խմբերն են հայախոս և ոչ հայախոս անձինք, որոնք կրթություն ստանալու, աշխատանքի ընդունվելու կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ նպատակներով պարտավոր են ունենալ հայերենի իմացության մակարդակը հավաստող պաշտոնական փաստաթուղթ:

6. Համակարգի վարման կարգի նպատակն է ապահովել հայերենի իմացության ստուգման և գնահատման գործընթացի կազմակերպումը, քննության անցկացման միասնական մոտեցումների մշակումը, ինչպես նաև արդյունքների տրամադրման և համակարգից օգտվողների հետ կապված իրավահարաբերությունների կարգավորումը:

2. Համակարգը և գործառույթները

7. Համակարգը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 26-ի 35-Լ հրամանով հաստատված «Ոչ հայախոսների համար հայերենի (արևելահայերենի) իմացության մակարդակների պետական չափորոշիչներ»-ի հիման վրա և ներառում է Համակարգի գործարկման համար անհրաժեշտ առաջադրանքների շտեմարանը:

8. Համակարգը մշակվել է Եվրոպական խորհրդի լեզուների իմացության ու գնահատման ընդհանուր շրջանակի չափորոշիչների (CEFR — Common European Framework of Reference for Languages) A1-C2 (հայերենի համար՝ Ա1-Գ2) մակարդակներին համապատասխան՝ ելնելով հայերենի յուրահատկություններից:

9. Լեզվական իմացության մակարդակը չափվում է ինչպես ինքնաշխատ, այնպես էլ մասնագետ գնահատողի կողմից իրականացվող գնահատման մեխանիզմներով: Հարթակը ինքնաշխատ եղանակով ստուգում և գնահատում է պատասխանների տարբերակներ ունեցող առաջադրանքները: Բանավոր կարողությունը ստուգող, ինչպես նաև ընթերցման և գրավոր խոսքի կարողությունը ստուգող բաց պատասխան պահանջող առաջադրանքների գնահատումն իրականացվում է համապատասխան մասնագիտական պատրաստվածություն ունեցող մասնագետ գնահատողի կողմից:

10. Գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր առաջադրանքի համար մշակված գնահատման սանդղակի հիման վրա: Գնահատման սանդղակը մշակվում է չափորոշիչներին համապատասխան և առաջադրանքների պահանջներից ելնելով:

11. Քննության արդյունքներն ամփոփվում և հաստատվում են կրթության ոլորտի լիազոր պետական մարմնի կողմից:

3. Քննության կազմակերպումը և անցկացումը

12. Հարթակը բաց է քննությանը մասնակցել ցանկացող անձանց համար՝ անկախ նրանց գտնվելու վայրից և տեխնիկական միջոցներից:

13. Քննությանը մասնակցելու համար մասնակիցը գրանցվում է Հարթակում իր էլեկտրոնային հասցեով՝ նախատեսված ընթացակարգով:

14. Գրանցման նպատակով մասնակիցը տրամադրում է Համակարգում նախատեսված նույնականացման տվյալները, ընտրում է քննության անցկացման վայրը, որից հետո մասնակցին տրամադրվում է տեղեկություն քննության օրվա և ժամի մասին: Մասնակիցը հաստատում է գրանցման պայմաններին իր համաձայնությունը:

15. Քննությունն անցկացվում է առցանց ձևաչափով:

16. Քննության ընթացքը վերահսկում է քննավարը:

17. Քննության կազմակերպման և անցկացման գործընթացն ապահովելու նպատակով մշակվում և հրապարակվում են ուղեցույցներ, մեթոդական ցուցումներ և տեղեկատվական նյութեր:

18. Քննությանը գրանցվելու, հարթակից օգտվելու, քննությանը մասնակցելու, գնահատման և արդյունքների տրամադրման ուղեցույցները հասանելի են Հարթակում:

4. Քննության արդյունքների ամփոփում և ներկայացում

19. Քննության արդյունքների հիման վրա մասնակցին է տրվում հայերենի իմացության մակարդակը հավաստող հավաստագիր:

20. Հավաստագիրը հայերենի իմացության մակարդակը հավաստող պաշտոնական փաստաթուղթ է և համարվում է պետական նմուշի որակավորման փաստաթուղթ:

21. Պատասխանների տարբերակներ ունեցող առաջադրանքների արդյունքները մասնակիցին տրամադրվում է անմիջապես քննության ավարտից հետ:

22. Քննության արդյունքները մասնակցին տրամադրվում են էլեկտրոնային եղանակով կամ փոստային առաքմամբ, որը ընտրում է մասնակիցը քննության գրանցվելու ժամանակ:

23. Քննության արդյունքներն ամփոփվում և տրամադրվում են մասնակցի էլեկտրոնային հասցեին քննության ավարտից հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

24. Քննության արդյունքներն ամփոփվում և տրամադրվում են մասնակցի փոստային առաքմամբ քննության ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում:

25. Հայերենի իմացության մակարդակը հավաստող վկայականը վավերական է 2 (երկու) տարի ժամկետով:

26. Քննության արդյունքները պահպանվում են լիազոր մարմնի կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

27. Քննության ընթացքում տեխնիկական խնդիրների պատճառով թերի հանձնված քննությունը ենթակա է վերահանձնման քննության ավարտից հետո 5-օրյա ժամկետում:

5. Համակարգի կատարելագործում և հետադարձ կապ

28. Համակարգի շահագործման ընթացքում ի հայտ եկած տեխնիկական և բովանդակային խնդիրները կարող են հիմք դառնալ Համակարգի լավարկման համար:

29. Համակարգի բովանդակային և տեխնիկական խնդիրների վերացման և հետագա լավարկման նպատակով լիազոր մարմինը կարող է իրականացնել Համակարգի փորձարկում: Փորձարկման արդյունքները կրում են փորձնական բնույթ և օգտագործվում են բացառապես Համակարգի փորձարկման նպատակով:

30. Քննության մասնակիցը կարող է Հարթակի միջոցով ներկայացնել առաջարկություններ, դիտարկումներ կամ տեղեկություններ Հարթակի տեխնիկական և բովանդակային խնդիրների վերաբերյալ՝ Համակարգի հետագա կատարելագործման նպատակով:

31. Հարթակը ինքնաշխատ եղանակով ձևավորում է արդյունքների հաշվետվություն:

6. Եզրափակիչ դրույթներ

32. Համակարգում հավաքագրված և մշակվող անձնական տվյալները մշակվում, պահպանվում և պաշտպանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

33. Սույն կարգով չկարգավորված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: